25 սեպտեմբերի 2015 թվականի N 1099 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտի-մալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 2 հավելվածի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի՝

ա. Արմավիրի մարզի առողջապահական համակարգի օպտիմալացման պլանի «I. Արմավիրի տարածաշրջան» և «III. Բաղրամյանի տարածաշրջան» բաժիններում «Արմավիրի բժշկական կենտրոն» բառերը փոխարինել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» բառերով,

բ. «I. Արմավիրի տարածաշրջան» բաժնում ներկայացված Մեծամոր քաղաքի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. «Մեծամորի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը և «Մեծամորի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն: Պոլիկլինիկայի նեղ մասնագիտական ծառայություններն ինտեգրել Մեծամորի հիվանդանոցին, իսկ ստացիոնար ծառայությունները ենթարկել ներքին օպտիմալացման՝ միավորելով մեծահասակների և մանկական թերապևտիկ բաժանմունքները մեկ թերապևտիկ ծառայության մեջ՝ 20 մահճակալով և կրճատելով մահճակալների թիվը՝ ըստ ստորև ներկայացված կառուցվածքի՝

Մեծամորի բժշկական կենտրոն	Մահճակալների ներկա թիվը	Մահճակալների ներկա զբաղվածությունը	Մահճակալների առաջարկվող թիվը
Թերապևտիկ՝ ներառյալ մանկականը	20 (10 մեծերի և 10 մանկական)	81%	20 (10 մեծերի և 10 մանկական)
Վիրաբուժական	15	44%	15
Մանկաբարձագինեկոլոգիական	15	26%	0
Էնդոկրինոլոգիական	-	-	31
Ինֆեկցիոն	10	78%	10
Ընդամենը	**60**	**59%**	**76**

»,

գ. «II. Վաղարշապատի տարածաշրջան» բաժնի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. «Վաղարշապատի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության կազմում ստեղծել տուբերկուլյոզի դեմ պայքարի կաբինետ՝ վերապահելով նրան դիսպանսեր հսկողության գործառույթ: Կազմակերպել խորխի բակտերիոսկոպիկ հետազոտության գործառույթ՝ «Վաղարշապատի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության լաբորատորիայի կազմում: «Վաղարշապատի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության կազմում գործող տուբերկուլյոզի դեմ պայքարի կաբինետը և խորխի բակտերիոսկոպիկ հետազոտության ծառայությունը տեղակայել «Վաղարշապատի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության տարածքում՝ ծառայության համար անհրաժեշտ տարածքները տրամադրելով անհատույց օգտագործման հիմունքներով:»,

դ. «III. Բաղրամյանի տարածաշրջան» բաժնի 2-րդ կետի երկրորդ նախադասությունը հանել,

ե. «III. Բաղրամյանի տարածաշրջան» բաժնի 3-րդ կետի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդհանուր մահճակալային ֆոնդը կկազմի 362 (131՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն (ներառյալ 6-ը՝ Բաղրամյանի մոր և մանկան առողջության կենտրոնում), 76՝ «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն, 100՝ «Վաղարշապատի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերություն, 50՝ «Վաղարշապատի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերություն, 5՝ «Երվանդաշատի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն), կազատվի 6 մասնաշենք («Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության մանկական բաժանմունքի, «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական, ինֆեկցիոն և վարչական, «Վաղարշապատի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության ինֆեկցիոն մասնաշենքերը, ինչպես նաև «Վաղարշապատի հակատուբերկուլյոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության շենքը)՝ շուրջ 3289 քառակուսի մետր տարածքով:».

2) որոշման N 6 հավելվածի Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի՝

ա. «I. Դիլիջանի տարածաշրջան» բաժնի 5-րդ կետը ճանաչել ուժը կորցրած,

բ. «IV. Բերդի տարածաշրջան» բաժնի 7-րդ կետը ճանաչել ուժը կորցրած,

գ. «IV. Բերդի տարածաշրջան» բաժնի 9-րդ կետի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդհանուր մահճակալային ֆոնդը կկազմի 234 (40՝ Դիլիջան, 80՝ Իջևան, 55՝ Նոյեմբերյան, 30՝ Բերդ, 5՝ Աչաջուր, 20՝ Արծվաբերդ, 4՝ Այգեձոր), կազատվի 2 մասնաշենք («Իջևանի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և «Նոյեմբերյանի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության շենքերը):».

3) որոշման N 8 հավելվածի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի՝

ա. «I. Կապանի տարածաշրջան» բաժնի 5-րդ կետը ճանաչել ուժը կորցրած,

բ. «IV. Մեղրու տարածաշրջան» բաժնի 9-րդ կետի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ծրագրի արդյունքում ընդհանուր մահճակալային ֆոնդը կկազմի 410 մահճակալ, և կազատվի շուրջ 10907.5 քառակուսի մետր մակերեսով տարածք:».

4) որոշման N 9 հավելվածի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի «II. Ախուրյանի տարածաշրջան» բաժնի 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

5) որոշման N 10 հավելվածի Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի՝

ա. «II. Վայքի տարածաշրջան» բաժնի 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած,

բ. «II. Վայքի տարածաշրջան» բաժնի 8-րդ կետի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մահճակալային ֆոնդը կկրճատվի 105-ով և կկազմի 85 մահճակալ: Կազատվի շուրջ 12911.17 քառակուսի մետր մակերեսով տարածք (ներառյալ Ջերմուկի հիվանդանոցի նախկին՝ քաղաքապետարանի տնօրինությանը հանձնված շենքը):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. սեպտեմբերի
Երևան

15_1099